Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թվականի
դեկտեմբերի 24 -ի N 940 - Ա որոշման

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ «ՎԱՆԱՁՈՐԻ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՏՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Վանաձորի տարեցների տան խնամքի տակ գտնվող միայնակ, սոցիալապես անապահով տարեցների խնամքի կազմակերպում, նրանց սոցիալական պահանջմունքների բավարարում, բժշկական, հոգեբանական օգնության ցուցաբերում
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	Ակնկալում ենք սննդամթերքի, տնտեսական ապրանքների արժեքի, հեռախոսակապի, սպառած գազի, գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման, էլեկտրաէներգիայի և տարեկան աուդիտի գծով մատուցված ծառայությունների դիմաց ԱԱՀ-ից ազատում 01.01.2020 թ.-31.12.2020 թ. ընթացքում:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի Հայ օգնության ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), ամերիկահայ բարերարներ՝ Գևորգ և Սիրվարդ Գարամանուկներ, Շահան Արծրունի
4.	Ծրագիրը կատարողը	«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամ, հասցե՝ ք. Վանաձոր, Մայմեխի խճ. 8, ՀՎՀՀ՝ 06940684
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մայմեխի խճ. 8 Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է **59 022 750** դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Վանաձորի տարեցների տանը մշտապես բնակվող 55 սոցիալապես անապահով տարեցներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01.01.2020 թ. – 31.12.2020 թ., ծրագիրը շարունակական է:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հիմնադրամի խնամքի տակ գտնվող սոցիալապես անապահով տարեցների շուրջօրյա խնամքի կազմակերպում, դրա իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, տարեցների սոցիալական պահանջմունքների բավարարում, բազմատեսակ հետաքրքիր և մշակութային միջոցառումների իրականացում նրանց առօրյան հետաքրքիր դարձնելու համար, հոգեբանական և իրավաբանական օգնության տրամադրման կազմակերպում 2020 թվականի ողջ տարվա ընթացքում, որը ներառում է նրանց խնամքի, հիգիենայի, սննդի, հագուստի, առողջապահական, օրվա զբաղմունքի կազմակերպման, շենքի պահպանության, կոմունալ-կենցաղային և այլ տնտեսական, ինչպես նաև խնամող, մասնագիտական, ադմինիստրատիվ և սպասարկող անձնակազմի աշխատավարձերը, այդ թվում՝ 1. Տարեցների տանը բնակվող տարեցների համար նպաստավոր պայմանների ստեղծում • Կոմունալ և կապի ծառայության ծախսեր՝ - 8 882 250 դրամ • Շենքի շահագործման և պահպանման ծախսեր՝ - 702 000 դրամ 2. Տարեցների խնամքի, հիգենայի կազմակերպում, սոցիալական պահանջմունքների բավարարում, մշակութային միջոցառումների կազմակերպում, հոգեբանական և իրավաբանական օգնության տրամադրում • Մսնդի, տնտեսական ապրանքների ձեռքբերում - 18 471 000 դրամ • Հագուստի, անկողնային և այլ անհրաժեշտ պարագաների ձեռքբերում - 846 000 դրամ • Տարեցների տունն սպասարկող տրանսպորտային միջոցների շահագործման և սպասարկման ծախսեր - 1 845 000 դրամ • Խնամքի, սոցիալական և հոգեբանական աշխատանքներ (մասնագետների աշխատավարձեր) - 20 713 200 դրամ • Այլ ծախսեր - 360 000 ՀՀ դրամ 3. Դեղորայք, բժշկական և հիգենիկ պարագաներ - 1 269 000 դրամ 4. Կազմակերպական ծախսեր - 5 934 300 դրամ

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	**Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների ծավալները կազմում են 33 301 250 դրամ, այդ թվում՝** 1. Գազամատակարարում – 4 412 000 դրամ, 2. Էլեկտրոէներգիայի մատակարարում – 3 619 000 դրամ 3. Գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկում – 100 000 դրամ 4. Հեռախոսակապի գծով ծառայութուն – 598 500 դրամ 5. Աղբահանություն գծով ծախս – 144 000 դրամ 6. Դեռատիզացիոն աշխատանքների կատարում – 8 750 դրամ 7. Մննդամթերքի ձեռքբերում – 17 390 000 դրամ 8. Տնտեսական ապրանքեր, կենցաղային և հիգենիկ պարագաների ձեռքբերում –1 081 000 դրամ 9. Հագուստեղենի, կոշկեղենի ձեռքբերում –560 000 դրամ 10. Անկողնային պարագաների ձեռքբերում – 286 000 դրամ 11. Շենքի շահագործման համար նյութեր և վերանորոգման այլ ծախսեր – 702 000 դրամ 12. Տրանսպորտային միջոցների շահագործում (վառելիք) – 1 100 000 դրամ 13. Տրանսպորտային միջոցների սպասարկման ծախսեր (ավտոպահեստամասեր, վերանորոգում) – 745 000 դրամ 14. Դեղորայք, բժշկական և հիգիենիկ պարագաների ձեռքբերում – 1 269 000 դրամ 15. Գրենական և գրասենյակային պիտույքների ձեռքբերում – 112 500 դրամ 16. Հաշվապահական ծրագրերի սպասարկման վճար – 105 000 դրամ 17. Համակարգչային սպասարկման ծախսեր – 55 000 դրամ 18. Աշխատակազմի պարբերական բուժզննության ծախսեր – 170 000 դրամ 19. Տարեկան աուդիտի անցկացման հետ կապված ծախսերը –470 000 դրամ 20. Բանկային ծառայություն –13 500 դրամ 21. Այլ ծախսեր-360 000 դրամ **Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում ներքոհիշյալ կազմակերպությունների կողմից մատակարարված ապրանքների և ծառայությունների գծով** 1. Օգտագործված գազի դիմաց ԱԱՀ-ից ազատում 4 412 000 դրամի չափով 01.01.2020 թ.-31.12.2020 թ. ընթացքում /պայմանագիր N 03108134348, կնքված՝ 01.08.2013 թ. «Գազպրոմ Արմենիա» (ՀայՌուսգազարդ) ՓԲԸ-ի Լոռու ԳԳՄ-ի (ք.Վանաձոր, Չուխաջյան 2/2ա, ՀՎՀՀ 00046317) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև. 2. Գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման և կարգաբերման աշխատանքների դիմաց ԱԱՀ-ից ազատում 99 778 դրամի չափով 01. 01.2020 թ.-31.12.2020 թ. ընթացքում՝ պայմանագիր N 4-59, կնքված՝ 06.11.2019 թ. «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Աղոնցի 10, ՀՎՀՀ 00930884) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև.

		3. Մննդամթերքի և տնտեսական ապրանքների դիմաց ԱԱՀ-ից ազատում 17 000 000 դրամի չափով 01.01.2020 թ.-31.12. 2020 թ. ընթացքում՝ պայմանագիր N 19-01, կնքված՝ 25.11.2019 թ. «Սպարապետ» ՍՊԸ-ի (ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 79, ՀՎՀՀ 06915002) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև 4. Օգտագործած էլեկտրաէներգիայի դիմաց ԱԱՀ-ից ազատում 3 619 000 դրամի չափով 01.01.2020 թ.-31.12.2020 թ. ընթացքում՝պայմանագիր N 8004271, կնքված՝ 18.10.2018 թ. «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ ԽՍՍ տնօրինության (ՀՀ, ք. Երևան, Ա. Արմենակյան 127, ՀՎՀՀ 01520882) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև. 5. Հեռախոսակապի ծառայության դիմաց ԱԱՀ-ից ազատում 598 500 դրամի չափով 01.01.2020 թ.-31.12.2020 թ. ընթացքում՝ պայմանագիր N 510100708, կնքված՝ 14.03.2008թ «Վեոն Արմենիա» (Արմենթել) ՓԲԸ-ի Լոռու կենտրոնի (ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 18, ՀՎՀՀ 02500052) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև: Կից ներկայացվում են պայմանագրերի լուսապատճենները:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	**Ծրագրի իրականացման կազմակերպման ծախսերը կազմում են - 5 934 300 դրամ, որը կազմում է ծրագրի ընդհանուր արժողության 10.0 %-ը:** Այն իր մեջ ներառում է՝ 1. Վարչական անձնակազմի աշխատանքի վարձատրության ծախսեր- 4 753 300 դրամ, 2. Գործուղման ծախսեր- 135 000 դրամ, 3. Գրենական պիտույքների ձեռքբերման ծախսեր- 112 500 դրամ, 4. Համակարգչային և համապատասխան ծրագրերի սպասարկման ծախսեր- 160 000 դրամ, 5. Ավտոմեքենաների տեխնիկական զննություն, ապահովագրություն, գույքահարկ-120 000 դրամ 6. Աշխատակազմի պարբերական բուժզննության ծախսեր- 170 000 դրամ, 7. Տարեկան աուդիտի անցկացման հետ կապված ծախսերը 470 000 դրամ: 8. Բանկային ծառայության-13 500 դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն, Լոռու մարզպետարան, տեղական ինքնակառավարման մարմիններ

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է Ամերիկայի ՀՕՖ-ի Նյու-Յորքի և հայաստանյան գրասենյակների կողմից, ինչպես նաև կներկայացվեն տեղեկություններ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ